ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— հունվարի- 2024 թվականի №—-Ա

«ՌԵՏՆ ԷՅ ԷՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՌԵՏՆ ԷՅ ԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի նոյեմբերի 15-ի գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու հայտ (այսուհետ՝ Հայտ), որի համաձայն՝ Ընկերության միակ մասնակից «ՌԵՏՆ ՔԵՓԻԹԸԼ» ԷԼ ԹԻ ԴԻ ընկերությունը (գրանցված՝ Միացյալ Թագավորությունում) նախատեսում է իրեն պատկանող՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասը վաճառել՝ «ՌԵՏՆ ՆԵԹՎՈՐՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (գրանցված՝ Միացյալ Թագավորությունում), միաժամանակ Ընկերությունը հայտնել է, որ գործարքի արդյունքում Ընկերության վերջնական շահառուները չեն փոխվելու,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված Հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 27-ի №ԳԲ/34.2-Մ2-8/4500-2023 գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը նույն թվականի դեկտեմբերի 26-ի №01/11.1/12122-2023 գրությամբ հայտնել է, որ իր իրավասությունների շրջանակում Հայտի վերաբերյալ առարկություններ չունի՝ գրությանը կից ներկայացնելով նաև Հայտի վերաբերյալ

դիտողություններ և առաջարկություններ չունենալու մասին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը,

գ) Հայտի ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ բացակայում են «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի
2-րդ մասը և Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ՌԵՏՆ ՔԵՓԻԹԸԼ» ԷԼ ԹԻ ԴԻ ընկերությանը պատկանող՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասը «ՌԵՏՆ ՆԵԹՎՈՐՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վաճառելու գործարքի կնքմանը,
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հունվարի 2024 թ.